ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երևան 18 սեպտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Նախագահությամբ՝ Հ. Դանիելյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Մ. Թոփուզյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Խաչատուր Մովսիսյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ. Խաչատուր Մովսիսյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229, 231 և 234 հոդվածների, 233 հոդվածի 1-ին կետի 1-ին և 4-րդ ենթակետերի սահմանադրականությունը:

2-րդ դատական կազմը գտավ, որ ներկայացված դիմումը ենթակա է մերժման ակնհայտ անհիմն լինելու, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասի պահանջներից ելնելով, որի համաձայն՝ անձը համապատասխան պահանջով Սահմանադրական դատարան կարող է դիմել միայն այն դեպքում, երբ սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները: Տվյալ դեպքում դիմումին կից ՀՀ Վճռաբեկ դատարանի համապատասխան ակտը չի վկայում դիմողի կողմից դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառած լինելու հանգամանքը, քանզի դիմողը կարող է կրկին դիմելՀՀ Վճռաբեկ դատարան՝ միջնորդելով վերականգնել բողոք բերելու բաց թողած ժամկետը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 69 հոդվածի 6 կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

Քաղ. Խաչատուր Մովսիսյանի դիմումը՝ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229, 231 և 234 հոդվածների, 233 հոդվածի 1-ին կետի 1-ին և 4-րդ ենթակետերի սահմանադրականությունը վիճարկելու մասին, մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝ .